



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 37-Լ

«31» 08 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թ հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով,

՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կանոնադրությունը՝ հանաձայն հավելվածի:

8/31/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Ժ. ԱՆԴՐԵԱՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ և
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը (այսուհիտ՝ Բաժին) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարում է Նախարարը:

4. Բաժնի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Բաժնի աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Բաժնի անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժին:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Բաժնի նպատակներն են.

1) նպաստել յուրաքանչյուր անձի նախընթաց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները՝ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով կատարելագործելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացների կազմակերպմանը,

2) ստեղծել բարենպաստ պայմաններ անհատի ուսումնառության անձնական և մասնագիտական կարիքները բավարարելու համար,

3) աջակցել մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովմանը:

8. Բաժնի խնդիրներն են.

1) ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում,

2) մեծահասակների հարատև ուսումնառության և շարունակական զարգացման համար միջավայրի ապահովում,

3) լրացուցիչ կրթական ծրագրերի Ազգային ռեսուրսի ստեղծում,

4) ոչ ֆորմալ կրթության հանրահոշակիմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,

5) լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտի քաղաքականության մշակում,

6) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների նկատմամբ մոնիթորինգի իրականացում:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում,

2) ոչ ֆորմալ կրթության զարգացմանը և իրազեկմանը ուղղված միջոցառումների կազմակերպում,

3) լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման ապահովում, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների, ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրում,

- 4) լրացուցիչ կրթական ծրագրերի երաշխավորման գործընթացի իրականացում,
- 5) լրացուցիչ կրթական ծրագրերի Ազգային ռեեստրի վարում,
- 6) մեծահասակների և ավագ սերնդի հարատև կրթության խրախուսում,
- 7) բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում լրացուցիչ և շարունակական կրթության աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- 8) ոչ ֆորմալ կրթության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակում,
- 9) ոչ ֆորմալ կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման մասնակցություն,
- 10) կրթության զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքների մասնակցություն,
- 11) կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակման և դրանց իրականացման կազմակերպման մասնակցություն,
- 12) Նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովման մասնակցություն,
- 13) ոչ ֆորմալ կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի և պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման աշխատանքների իրականացում,
- 14) դրամաշնորհների տրամադրման և գնման հայտերի տրամադրման աշխատանքների իրականացում,
- 15) Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

4. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Բաժնի ղեկավարը հաշվետու է Նախարարին:
11. Բաժնի գործունեությունը ղեկավարում և համակարգում է բաժնի պետը:
12. Բաժնի պետը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:
13. Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների,

քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվով քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

14. Բաժինը ունի բաժնի պետ և մասնագետներ: